

Հաստատված է «ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի Խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 19/02 առ 28.12.2016թ.

Խորհրդի նախագահ՝  Է. Սուքիասյան

Սույն պայմանները հանդիսանում են MR _____ վկայագրի պայմանները



**«ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Երևան 2016

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ	5
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ	6
5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ	14
7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	15
8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	16
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ	18
10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	19
11. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ... ..	22
12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ	24
13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ	33
14. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔ)	36
15. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)	37
16. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ	38
17. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 1.2. «ՄԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն իրականացնում է տրանսպորտային միջոցի ապահովագրություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի (Ապահովագրության տեսակները և դասերը) 2-րդ մասի (ոչ կյանքի ապահովագրություն) հետևյալ դասերով.
 - 1.2.1. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային), որը ծածկում է այն վնասները կամ կորուստները, որոնք պատճառվել են.
 - ա) ցամաքային ավտոտրանսպորտին,
 - բ) այլ ցամաքային տրանսպորտին:
 - 1.2.2. Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ).
 - ա) ամրագրված դրամական հատուցմամբ,
 - բ) հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից,
 - գ) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերը միասին,
 - դ) ուղևորների վնասվածքների.
 - 1.2.3. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:
- 1.3. Ապահովագրության պայմանագրով կամ Վկայագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետ՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետ՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում հատուցել Ապահովադրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետ՝ Շահառու) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:
- 1.4. Սույն պայմանների համաձայն կնքված Պայմանագրերը գործում են ՀՀ և ԼՂՀ տարածքներում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.5. Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար (այսուհետ՝ նաև Պայմանագրի կողմեր):

1.6. Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Պայմանների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրող - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ նաև Ընկերություն):

Ապահովադիր - Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպչական ձևի իրավաբանական անձ, օտարերկրյա կազմակերպություն, գործունակ ֆիզիկական անձ, օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձիք:

Շահառու - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրության Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ: Գրավադրված ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության դեպքում Ապահովագրության պայմանագրում/վկայագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն առաջնահերթության կարգով իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադրին կամ այլ Շահառուին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության դեպքում Շահառու է հանդիսանում ապահովագրական պատահարի արդյունքում Տուժողը: Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների՝ դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում Շահառու է հանդիսանում Ապահովագրված անձը, նրա ժառանգները կամ Ապահովագրված անձի կողմից նշանակված այլ անձ:

Ապահովագրված անձ - անձ, որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա:

Ապահովագրության պայմանագիր/վկայագիր (այսուհետև՝ նաև Պայմանագիր/Վկայագիր) - Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում (բացառությամբ՝ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների) ապահովագրական գումարի սահմաններում հատուցում վճարել Ապահովադրին (կամ Շահառուին), իսկ

Ապահովադիրը պետք է վճարի ապահովագրության պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը նշված չափով, կարգով և ժամկետներում:

Ապահովագրության օբյեկտ - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

Ցամաքային տրանսպորտային միջոց (այսուհետ՝ SU) – Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր ավտոտրանսպորտային միջոց (այդ թվում՝ անձնական օգտագործման ավտոմեքենաներ, ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ, քարշակներ, թեթև մարդատար ավտոմեքենաներ):

Ապահովագրական ռիսկ - ապահովագրման ենթակա հնարավոր պատահար, որը կարող է տեղի ունենալ պայմանագրի գործողության ընթացքում, որը կրում է հանկարծակի և պատահական բնույթ:

Ապահովագրական պատահար - պատահար, որի ի հայտ գալու դեպքում (բացառությամբ սույն Պայմանագրում նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադիրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում՝ սույն պայմաններում և Պայմանագրում/Վկայագրում նշված կարգով:

Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) - ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովադիրին կամ Շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

Դժբախտ պատահար - SU-ի շահագործման արդյունքում կամ կանգառի վիճակում վարորդի, ուղևորների կյանքին և առողջությանը պատճառված վնաս, որը կրում է հանկարծակի, անսպասելի, արտաքին, անկանխատեսելի, կարճաժամկետ (մինչև մի քան ժամ տևողությամբ) և պատահական բնույթ:

Ապահովագրական գումար - Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը:

Ապահովագրական արժեք - Պայմանագրի կնքման պահին SU-ի շուկայական արժեք:

Ապահովագրավճար – Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադիրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

Չհատուցվող գումար - վնասի չափ, որը չի հատուցվում Ապահովագրողի կողմից և որը սահմանվում է ապահովագրության Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարը լինում է երկու տեսակի՝

Պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ

վնասը չի գերազանցում ապահովագրության Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.

Ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

Լիազորված վարորդ - առնվազն 3 տարվա նշված կարգի SU վարելու համապատասխան վարորդական իրավունք ունեցող Ապահովադիրը, տրանսպորտային միջոցի սեփականատերը և նրանց կողմից լիազորված, առնվազն 3 տարվա նշված կարգի SU վարելու համապատասխան վարորդական իրավունք ունեցող ցանկացած անձ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

Լրացուցիչ սարքավորումներ - սարքավորումներ, մասեր, որոնք չեն կազմում SU-ն արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մաս (օրինակ՝ աուդիո, վիդեո համակարգեր, ոչ գործարանային անվահեծեր, բարձրախոս, համակարգիչ, կապի միջոցներ, հակաառևանգման միջոցներ, ոչ գործարանային ավտոձայնագրիչ, ոչ գործարանային տեղադրության գազի բալոն և այլն):

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Շահառուի, Ապահովագրված անձի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված հետևյալ իրադարձությունների հետ.

3.1.1. Բաժին Ա. SU-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման հետևանքով SU-ին և/կամ SU-ում մշտապես տեղադրված լրացուցիչ սարքավորումներին պատճառված վնաս և/կամ կորուստ: Սույն պայմաններով ապահովագրման ենթակա են սեփականության, վարձակալության կամ լիզինգի պայմանագրով, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ եղանակով շահագործման ենթակա SU, որոնք կարող են շահագործվել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով և Ապահովադրի ցանկությամբ՝ նաև SU-ի վրա կամ մեջ տեղադրված լրացուցիչ սարքավորումները,

3.1.2. Բաժին Բ. SU-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման հետևանքով Լիազորված վարորդի և/կամ ուղևորների կյանքին կամ առողջությանը պատճառված վնաս,

3.1.3. Բաժին Գ. SU-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և/կամ գույքին պատճառված վնասի համար քաղաքացիական պատասխանատվություն:

- 3.2. Նախքան Պայմանագրի կնքումը SU և/կամ լրացուցիչ սարքավորման առկա վնասները և/կամ դրանց հետևանքով առաջացած պատահարները չեն համարվում ապահովագրական և Շնկերության կողմից ենթակա չեն հատուցման:
- 3.3. Եթե ապահովագրական պատահարի ժամանակ վնասվում է SU այն հատվածը և/կամ մասը, որը Պայմանագրի կնքման պահին եղել է վնասված կամ հետևանք է մեկ այլ, ոչ ապահովագրական պատահարի, ապա ապահովագրական հատուցման գումարը հաշվարկելիս նախկինում առկա վնասվածքների արժեքի չափով կատարվում են համապատասխան նվազեցումներ:
- 3.4. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում SU նախապես առկա վնասները վերացվում են/վերանորոգվում են, և Ապահովադիրն այդ մասին գրավոր տեղեկացնում է Շնկերությանը, ապա վերջինս իրականացնում է SU զննում և կազմում զննման ակտ: Զննման ակտը կազմելու օրվանից ապահովագրական պատահարի արդյունքում SU այն հատվածի վնասը, որը նախկինում նշվել է որպես առկա և վերացվել է, ենթակա է հատուցման:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

- 4.1. Սույն պայմաններով ապահովագրման ենթակա են ռիսկերը հետևյալ Բաժիններով՝
- 4.1.1. **Բաժին Ա – SU-ի ֆիզիկական վնասը և/կամ կորուստը** հետևյալ իրադարձությունների արդյունքում՝ բացառությամբ Պայմանագրում և Պայմաններում նշված դեպքերի.
- **ՃՏՊ (ճանապարհատրանսպորտային պատահար)** - ճանապարհով SU-ի շարժման ընթացքում կամ կանգառի վիճակում դրա մասնակցությամբ առաջացած դեպք,
 - **բնական/տարերային աղետներ** (բացառությամբ՝ երկրաշարժ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով) - բնության ազդեցությունը SU-ի վրա (կայծակի հարված, փոթորիկ, ջրհեղեղ, մրրիկ, կարկուտ և այլն),
 - **հրդեհ, պայթյուն կամ ինքնաբռնկում,**
 - **Կենդանիների գործողություններ** - կենդանիների պատճառով հասցված վնաս կամ կորուստ,
 - **SU-ի վնաս և/կամ կորուստ՝** թռչող սարքավորումների կամ նրանց բեկորների և կամ մասերի, կամ այլ առարկաների, իրերի, շինարարական կոնստրուկցիաների հետ բախման, վայր ընկման, ինչպես նաև ծառերի, քարերի, բեկորների, ձյան, սառույցի վայր ընկնելու, ջրի մեջ ընկնելու հետևանքներով SU-ի վնասում,
 - **Հրդեհ և (կամ) պայթյուն** - չվերահսկվող այրում և/ կամ մեծ հարվածային ուժով էներգիայի կտրուկ արագության միանվագ առաջացում, որի

արդյունքում ապահովագրված SU-ին և/կամ լրացուցիչ սարքավորմանը պատճառվում է նյութական վնաս,

- **Երրորդ անձանց գործողություններ**, որն իր մեջ ներառում է՝

ա) Երրորդ անձանց անօրինական գործողությունների իրագործման կամ իրագործման փորձի արդյունքում, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրումով, SU-ին հասցված վնասներ, հրկիզում, պայթեցում կամ կորուստ,

բ) Երրորդ անձանց կողմից SU-ի անզգուշությամբ վնասում կամ կորուստ:

4.1.2. **Հափշտակության ռիսկեր՝**

- SU կամ նրա մասերի և/ կամ Լրացուցիչ սարքավորման գոդություն,
- SU կամ նրա մասերի և/ կամ Լրացուցիչ սարքավորման կողոպուտ,
- SU կամ նրա մասերի և/ կամ Լրացուցիչ սարքավորման վնասում՝ գոդության կամ կողոպուտի փորձի կամ դրանց իրագործման հետևանքով,
- առանց հափշտակելու նպատակի SU-ի ապօրինաբար տիրանալը, եթե այդ ռիսկը առանձին ներառված է Պայմանագրում,
- ավագակություն, եթե այդ ռիսկը առանձին ներառված է Պայմանագրում:

4.1.3. **Բաժին Բ** – SU-ի տիրապետման և/կամ օգտագործման/շահագործման հետևանքով լիազորված վարորդի և/կամ ուղևորների կյանքին, առողջությանը կամ աշխատունակությանը հասցված վնասը (բացառությամբ Պայմանագրում և Պայմաններում նշված դեպքերի), մասնավորապես.

- դժբախտ պատահարի հետևանքով լիազորված վարորդի և/կամ ուղևորների մահ,
- դժբախտ պատահարի հետևանքով լիազորված վարորդի և/կամ ուղևորների մշտական լրիվ անաշխատունակություն,
- դժբախտ պատահարի հետևանքով լիազորված վարորդի, ուղևորների առաջին բուժօգնության համար նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ բժշկական ծախսեր:

4.1.4. **Բաժին Գ** – SU-ի օգտագործման/շահագործման ընթացքում և դրա մասնակցությամբ տեղի ունեցած դեպքի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և/կամ նրանց գույքին պատճառված վնասների հետևանքով առաջացած Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվությունը՝ բացառությամբ Պայմանագրում և Պայմաններում նշված դեպքերի:

4.2. Բաժին Ա-ի համար Ապահովագրական պատահար են համարվում 4.1.1 և 4.1.2 կետերում նշված իրադարձություններից յուրաքանչյուրի ի հայտ գալը, որը հանգեցրել է ապահովագրված SU-ի վնասին և/կամ կորուստին:

- 4.3. Պայմանագրում Բաժին Ա-ով կարող է իրականացվել ապահովագրություն հետևյալ տարբերակներով.
- SU-ի ապահովագրություն ֆիզիկական վնասի և հափշտակության ռիսկերից,
 - SU-ի ապահովագրություն ֆիզիկական վնասի ռիսկից:
- 4.4. Բաժին Բ-ի համար ապահովագրական պատահար է համարվում 4.1.3 կետում նշված իրադարձություններից յուրաքանչյուրի ի հայտ գալը:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. **Ապահովագրական հատուցման ենթակա չեն վնասները, որոնք.**
- 5.1.1. Ապահովադրի, նրա ընտանիքի անդամների, շահառուի, Ապահովագրված անձի, լիազորված վարորդի կամ ապահովագրական պատահարի առաջացման համար շահ ունեցող ցանկացած անձի կանխամտածված և դիտավորությամբ կատարված գործողությունների կամ անգործության հետևանք են,
- 5.1.2. SU-ն հակաօրինական գործողություններ կատարելու նպատակով լիազորված վարորդի կողմից շահագործման կամ օգտագործման հետևանք են,
- 5.1.3. զանգվածային անկարգությունների կամ ժողովրդական հուզումների հետևանք են,
- 5.1.4. օտարերկրյա թշնամական ուժերի կողմից սկսած պատերազմի (անկախ նրանից, թե պատերազմ հայտարարվել է, թե ոչ), ներխուժման, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, խռովության, զինվորական հեղաշրջման, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, իշխանության ապօրինի զավթման կամ ահաբեկչական ակտի հետևանք են,
- 5.1.5. առաջացել են ձայնային կամ գերձայնային արագությամբ ընթացող ինքնաթիռի կամ այլ թռչող ապարատի առաջացրած ճնշման ալիքների հետևանքով,
- 5.1.6. առաջացել են ցանկացած իոնացնող ճառագայթման կամ միջուկային վառելիքի այրման հետևանքով ի հայտ եկած միջուկային աղբի հետևանքով ծագած ռադիոակտիվ աղտոտման կամ ցանկացած պայթուցիկ միջուկային ագրեգատի կամ դրա բաղկացուցիչ մասի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր նյութերի պատճառով,
- 5.1.7. առաջացել են երկրաշարժի հետևանքով,
- 5.1.8. առաջացել են SU-ում հրավտանգ, դյուրավառ, թունավոր և պայթուցիկ նյութերի առկայության կամ տեղափոխման հետևանքով՝ բացառությամբ SU բնականոն աշխատանքը ապահովող նյութերի, որոնք լցված են SU մաս կազմող և տվյալ նյութի համար նախատեսված բաքում և/կամ տարայում:
- 5.1.9. հասցվել են շրջակա միջավայրին՝ SU-ից թափված կամ արտահոսած հեղուկի պատճառով,

- 5.1.10. պետական մարմինների կարգադրությամբ առգրավելու, բռնագրավելու, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ այն ոչնչացնելու հետևանք են (ինչպես նաև այդ գործողությունների ընթացքում և հետևանքով առաջացած վնասները կամ կորուստը),
- 5.1.11. Առաջացել են մարտկոցի կամ այլ էլեկտրասարքավորումների թույլ միացման, ներքին խզման հետևանքով,
- 5.1.12. Առաջացել են SU-ի և/կամ նրա մասերի, դետալների, ագրեգատների անսարքության, այդ թվում՝ SU-ի մեխանիկական և/կամ էլեկտրական խզումների կամ ագրեգատների մեջ այլ առարկաների կամ նյութերի ընկնելու/ներթափանցելու պատճառով, եթե դրանք չեն հանդիսանում Ապահովագրական պատահարի հետևանք,
- 5.1.13. Առաջացել են SU-ի վրա կամ դրա մեջ գտնվող բեռի (գույքի) ոչ պատշաճ կերպով ամրացված լինելու հետևանքով,
- 5.1.14. Պայմանագրում նշված Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած պատահարի հետևանք են,
- 5.1.15. SU տվյալ տեսակի համար սահմանված թույլատրելի քանակից և կամ քաշից ավելի բեռի և կամ ուղևորի տեղափոխման հետևանք են,
- 5.1.16. SU-ի տեղափոխման, փոխադրման, քարշակելու և այլնի (առանց մեքենան վարելու) հետևանք են,
- 5.1.17. Միջատների, կրծողների և սողունների գործողությունների հետևանք են,
- 5.1.18. Հասցվել են SU-ին, այդ թվում նաև սրահի ներքին հարդարանքին՝ Լիազորված վարորդի և/կամ ուղևորների կողմից սրահում ծխելու հետևանքով,

Ապահովագրական հատուցման ենթակա չեն նաև հետևյալ վնասները.

- 5.1.19. SU հայելիների, անվաղողերի, անվահեծերի, անիվների դեկորատիվ ծածկերի, հաշվառման համարանիշների, ֆիրմային ցուցանշանների, արտաքին այլ տեղադրված մասերի, այդ թվում սպոյլերների, մոլդինգների հափշտակությունը,
- 5.1.20. SU ընթացային մասերի վնաս, կորուստ կամ ոչնչացում, որի առաջացումը պայմանավորված չէ այլ առարկայի կամ SU-ի հետ բախմամբ,
- 5.1.21. SU-ի ներկածածկի և/կամ ապակիների վնասումը, այդ թվում՝ փոքր չափի քարերի, ավազի, փոքր առարկաների, ավտոմեքենայի մաքրման/լվացման, ծառերի և/կամ թփուտների ճյուղերի ներգործության հետևանքով, որը թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական ձևախախտման չի հանգեցրել,
- 5.1.22. Լրացուցիչ սարքավորումների կորուստ, վնաս, ոչնչացում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով,
- 5.1.23. SU-ի վերանորոգման, դրա վրա կամ մեջ ավտոպահեստամասերի, բաղադրամասերի, սարքավորումների, լրացուցիչ սարքավորումների տեղադրման ժամանակ և կամ դրա հետևանքով պատճառված վնասը,

- 5.1.24. SU-ի բնական մաշվածությունը և կամ հնացումը,
- 5.1.25. Ապահովագրված SU-ի բանալիների, ձայնաագդանշանային համակարգի և/կամ կենտրոնական փականի վահանակների հափշտակումը կամ կորուստը,
- 5.1.26. ցանկացած վնաս, որը տեղի է ունեցել SU-ի անսարքության, կամ այլ ներքին անսարքությունների հետևանքով,
- 5.1.27. SU-ի վրա կամ մեջ բեռի (իրերի, առարկաների, նյութերի և այլն) տեղադրման կամ SU-ից բեռի հանման (բեռնաթափման) ընթացքում տեղի ունեցած վնասը կամ կորուստը, որը հասցվել է ապահովագրված SU-ին, երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ այլ գույքին,
- 5.1.28. SU-ի վերանորոգումից հետո դրա շուկայական արժեքի նվազումը և կամ ապրանքային տեսքի կորուստը,
- 5.1.29. Առանց Ընկերության համաձայնության ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած SU-ի վնասների վերանորոգման ծախսերը, եթե Ապահովագրողը հնարավորություն չի ունեցել պարզելու ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի չափը,
- 5.1.30. SU-ի ժամանակավոր փոխարինման ծախսերը (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով),
- 5.1.31. Արգելակման հետևանքով կամ ճանապարհային ծածկույթի անհարթությունների, այդ թվում արագությունը նվազեցնող արգելանքների, բաց դիտահորների կամ փոսերի պատճառով անվադողերին, անվահեծերին հասցված վնասը,
- 5.1.32. Արգելակման հետևանքով SU-ին պատճառված վնասը,
- 5.1.33. Ապահովադրի, Շահառուի, Լիազորված վարորդի և/կամ ուղևորի ածանցյալ (կապակցված) ծախսերը և կորուստները (այդ թվում՝ բարոյական վնաս, կորցրած և/կամ չվաստակած եկամուտ, տուժանք՝ տույժեր և տուգանքներ, պարտադիր վճարումներ, բաց թողնված օգուտ, ցանկացած պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման, չկատարման և կամ թերի կատարման հետևանքով առաջացած ծախսեր, վնասներ և այլն),
- 5.1.34. Բաժին Ա-ով՝ Ապահովադրի, Շահառուի, Լիազորված վարորդի կամ ուղևորի տնօրինման տակ գտնվող կամ սեփականության իրավունքով պատկանող և SU-ով տեղափոխվող բեռի/իրերի և կամ ունեցվածքի կորուստը կամ վնասը:
- 5.2. Ապահովագրական հատուցման պահանջը ենթակա է մերժման, եթե.**
- 5.2.1. SU-ն օգտագործվել/շահագործվել է ոչ սթափ վիճակում՝ ալկոհոլային նյութերի ազդեցության տակ, և/կամ լիազորված վարորդը հրաժարվել է համապատասխան բժշկական փորձաքննությունից (զննում անցնելուց): Մույն պայմաններով Լիազորված վարորդը համարվում է ոչ սթափ՝ ալկոհոլային նյութերի ազդեցության տակ, եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ ալկոհոլի

պարունակությունը 0.1 միլիգրամից ավել է, կամ մեկ լիտր արյան մեջ ալկոհոլի պարունակությունը ավել է 0.22‰ կամ 0.22գ/լ:

- 5.2.2. SU-ն օգտագործվել/շահագործվել է թմրանյութերի և/կամ տոքսիկ և կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ, և/կամ լիազորված վարորդը հրաժարվել է համապատասխան բժշկական փորձաքննությունից (զննում անցնելուց): Լիազորված վարորդի արյան և/կամ մեզի մեջ թմրամիջոցների և/կամ հոգեմետ նյութերի և կամ տոքսիկ նյութերի պարունակությունը պետք է հավասար լինի զրոյի:
- 5.2.3. Դեպքի պահին SU-ի տեխնիկական վիճակը և կահավորվածությունը չի համապատասխանել ՀՀ կառավարության սահմանած՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկին (ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 995-Ն որոշման հավելված N2),
- 5.2.4. SU-ն մասնակցել է փորձարկումների, մրցավազքերի և այլ մրցությունների կամ վարորդական դասընթացների կամ ուսուցման նպատակով,
- 5.2.5. SU-ն օգտագործվել/շահագործվել է Պայմանագրով/Վկայագրով չնախատեսված լիազորված վարորդի կողմից,
- 5.2.6. SU վարորդը/Ապահովադիրը հրաժարվել է պատահարի փաստով վարչական վարույթի իրականացումից,
- 5.2.7. SU-ն օգտագործվել է տվյալ սեզոնին ոչ համապատասխան անվադողերով, ընդ որում՝ խոսքը վերաբերվում է շահագործման մեջ գտնվող բոլոր անվադողերին միաժամանակ կամ դրանցից թեկուզև մեկին,
- 5.2.8. SU-ի շարժիչը միացրած և առանց հսկողության է թողնվել,
- 5.2.9. SU-ն շահագործվել և/կամ օգտագործվել է SU-ն վարելու իրավունք չունեցող վարորդի կողմից կամ այն վարորդի կողմից, ով պատահարի պահին չի ունեցել գործող վարորդական իրավունքի վկայական,
- 5.2.10. SU-ն շահագործվել և/կամ օգտագործվել է SU կեղծ հաշվառման վկայագրով կամ կեղծ վարորդական իրավունքի վկայականով,
- 5.2.11. SU-ն ենթարկվել է անօրինական վերասարքավորման,
- 5.2.12. SU-ն շահագործվել և/կամ օգտագործել է վարորդի աչքի կամ վերին, կամ ստորին վերջույթի, դաստակի կամ ոտնաթաթի բացակայության, շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտումների, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգաների ձևախախտումների առկայության պայմաններում, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման, բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված SU-ի վարելու դեպքերին:

- 5.2.13. Վթարը տեղի է ունեցել SU-ի հանդիպակաց ուղեմաս մուտք գործելու կամ ճանապարհի երթևեկելի մասի ձախ կողմից դուրս գալու արդյունքում կամ ընթացքում (այդ թվում՝ SU-ի ընթացքի կայունությունն ու կառավարելիությունը կորցնելու կամ վարորդի կողմից երթևեկելի մասում առկա խոչընդոտը կամ վտանգի աղբյուրը շրջանցելու հետևանքով),
- 5.2.14. SU-ն ընթացել է լուսացույցի արգելող ազդանշանի տակ,
- 5.2.15. SU վարորդն արգելված վայրում հետադարձ, շրջադարձ կամ հետընթաց է կատարել,
- 5.2.16. SU-ի օգտագործման/շահագործման ժամանակ խախտվել են հրշեջ անվտանգության կանոնները,
- 5.2.17. Պետական իրավասու մարմնի կողմից չի հաստատվել պատահարի ի հայտ գալու փաստը (բացառությամբ 13.4. կետում նախատեսված դեպքերի),
- 5.2.18. Ապահովադիրը խոչընդոտում է պատահարի պատճառների բացահայտմանը և վնասի չափի որոշմանը,
- 5.2.19. Մեղավոր կողմից կամ երրորդ անձանցից Ապահովադիրը/Շահառուն ստացել է վնասի հատուցում,
- 5.2.20. Ապահովադիրը, Շահառուն կամ Լիազորված վարորդը.
- չի կատարել և/կամ թերի է կատարել ապահովագրական ռիսկը նվազեցնելու և/կամ դրա մեծացումը կանխելու իր պարտականությունը, այդ թվում՝ վթարային լուսարձակների միացում, զգուշացնող վահանակի տեղադրում և այլն,
 - SU-ն թողել է անտերության մատնված՝ առանց հսկողության և/կամ բնակավայրերից դուրս,
 - Չի կողպել SU-ի դռները և/կամ SU-ն բանալիներով թողել է անձանոթ անձանց տիրապետման և/կամ հսկողության տակ, ինչը հանգեցրել է ապահովագրական պատահարի առաջացմանը, բացառությամբ, եթե դա հնարավոր չի եղել իրականացնել օբյեկտիվ պատճառներով,
- 5.2.21. Ապահովադիրը, Շահառուն կամ լիազորված վարորդը SU-ի և/կամ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և հանգամանքների, ինչպես նաև ապահովագրական պատահարի առաջացման հետ առնչություն ունեցող անձանց վերաբերյալ դիտավորյալ ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և/կամ ապահովագրական ռիսկի գնահատման համար:

- 5.2.22. Ապահովադիրը չի ներկայացրել Ապահովագրողին վնասված ավտոմեքենան, դրա վնասված մասերը կամ մնացորդները մինչ վերանորոգումը (բացառությամբ գողության դեպքի):
- 5.2.23. Վարորդն իր տեղը լքելուց կամ SU-ը թողնելուց առաջ չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք բացառում են SU-ի ինքնաբերաբար շարժումը:
- 5.3. **Ապահովագրական պատահար չի համարվում SU-ի վնասը և/կամ կորուստը, որը տեղի է ունեցել հետևյալի արդյունքում.**
- 5.3.1. խարդախության, խաբեության, վստահությունը չարաշահելու եղանակով SU հափշտակությունը,
- 5.3.2. յուրացման կամ շորթման,
- 5.3.3. երրորդ անձանց կողմից SU-ի վերանորոգման, մաքրման, լվացման, պահպանման, կանգառման և այլ ծառայություններ մատուցելիս պահպանության կամ պաշտպանության պարտականությունների անփույթ կամ անբարեխիղճ կատարման:
- 5.4. **Բաժին Գ - ով Ապահովագրողը չի հատուցում.**
- 5.4.1. այն վնասները, որոնք պատճառվել են Ապահովադիրին, Լիազորված վարորդին և նրանց ընտանիքի անդամներին, ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի ուղևորներին, Ապահովադիրի մոտ աշխատող յուրաքանչյուր անձին (սույն կետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են SU սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը),
- 5.4.2. տուժած երրորդ անձանց հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու համար իրականացված ծախսերը,
- 5.4.3. տուժած երրորդ անձանց առողջարանային-կուրորտային բուժման հետ կապված ծախսերը,
- 5.4.4. բոլոր տեսակի բուժման, դեղորայքի և բժշկական պարագաների համար ծախսերը, որոնք տուժած երրորդ անձն անվճար ստանալու իրավունք ունի,
- 5.4.5. այն գույքին հասցված վնասը, որը տնօրինում, տիրապետում, օգտագործում է Ապահովադիրը, նրա ընտանիքի անդամները, լիազորված վարորդը, ուղևորները,
- 5.4.6. վնասը, որը պատճառվել է երրորդ անձանց.
- ձեռագրերին, պլաններին, գծագրերին և այլ փաստաթղթերին, հաշվապահական և գործառնական գրքերին,
 - կանխիկ դրամին և այլ արժեքներին (արժույթի, բանկային ստացագրերի, չեկերի, պարտատոմսերի, մուրհակների, պարտքային ստացագրերի,

վաուչերների, կտրոնների, ապրանքագրերի, վարկային քարտերի, դրամական վստահագրերի),

- թանկարժեք, կիսաթանկարժեք քարերին, մետաղներին և դրանցից պատրաստված զարդերին, նկարներին, քանդակներին, դրոշմանիշներին, այլ հավաքածուներին, մշակութային կամ կրոնական արժեք ներկայացնող իրերին/պարագաներին, անտիկվար իրերին/պարագաներին, մոդելներին, մակետներին, ցուցահանդեսային նմուշներին,
- համակարգիչներին և համակարգերում տեղեկություններ կրող և պահպանող սարքերին/սարքավորումներին, մասնավորապես՝ տեսա և ձայնաժապավեններին, սկավառակներին, հիշողության բլոկերին և այլնին,

5.4.7. շրջակա միջավայրին պատճառված վնասը:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

- 6.1. Պայմանագրում յուրաքանչյուր բաժնով նախատեսված ապահովագրության օբյեկտների ապահովագրական գումարները նշվում են առանձին տողերով:
- 6.2. Ապահովագրական գումարները բոլոր բաժինների համար սահմանվում են կողմերի համաձայնությամբ, սակայն Բաժին Ա-ի դեպքում (SU-ի ապահովագրություն ֆիզիկական վնաս, հափշտակություն ռիսկերից) ապահովագրական գումարը չի կարող գերազանցել Պայմանագրի կնքման օրվա դրությամբ SU շուկայական արժեքը (ապահովագրական արժեքը):
- 6.3. SU-ի Բաժին Ա-ով ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը կարող է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ SU-ի շուկայական արժեքից փոքր սահմանվել (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն):
- 6.4. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարից հետո ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով: Սակայն Ապահովադրի ցանկությամբ կարող է նվազած ապահովագրական գումարը վերականգնվել Պայմանագրին կից համաձայնագրի (հավելվածի) կնքմամբ՝ Ապահովագրողի կողմից հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճարի վճարման դեպքում:
- 6.5. Պայմանագրում կարող են սահմանված լինել պատասխանատվության սահմանաչափեր, օրինակ՝ Բաժին Բ-ով պատասխանատվության սահմանաչափ յուրաքանչյուր նստատեղի համար, Բաժին Գ-ով՝ պատասխանատվության սահմանաչափ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար, կամ պատասխանատվության սահմանաչափ մարմնական և գույքային վնասների համար:

- 6.6. Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով՝ կամ Ապահովագրական գումարի նկատմամբ կիրառելով ապահովագրական սակագինը կամ ֆիքսված գումարի չափով:
- 6.7. Ապահովագրավճարը Կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ, միանվագ կամ տարաժամկետ կարգով:
- 6.8. Ապահովագրավճարը պետք է վճարվի Պայմանագրում/Վկայագրում նշված կարգով և ժամկետներում:
- 6.9. Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները խախտելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի միակողմ լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը՝ սկսած վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժնի վճարման համար սահմանված վերջնաժամկետից:
- 6.10. Եթե ապահովագրության պայմանագրով /Վկայագրով/ նախատեսվել է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պարտավորություն և ապահովագրական հատուցման պահի դրությամբ ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա հերթական մասը վճարված չէ, ապա Ապահովագրողը հատուցվող գումարը կարող է նվազեցնել չվճարած ամբողջ ապահովագրավճարի չափով՝ անկախ Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ժամկետներից:
- 6.11. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը սույն կետով սահմանված ժամկետից 5 օր հետո (եթե Պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ)::
- 6.12. Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրն ապահովագրական պատահարի ի հայտ գալու պահի դրությամբ ապահովագրավճարի գծով ունի ժամկետանց պարտավորություններ:
- 6.13. Մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող ապահովագրության պայմանագրերի դեպքում ապահովագրավճարը հաշվարկվում է համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

- 7.1. Ապահովագրողի և Ապահովադիրի համաձայնությամբ Պայմանագրում/Վկայագրում կարող է նախատեսվել չհատուցվող գումար:
- 7.2. Զհատուցվող գումարը Ապահովադիրի մասնակցության չափն է ապահովագրական հատուցմանը:

- 7.3. Չհատուցվող գումարը Պայմանագրում սահմանվում է դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:
- 7.4. Այն դեպքում, երբ (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով) ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված այնպիսի վարորդի (լիազորված վարորդի) կողմից ՏՄ-ն վարելու դեպքում, ում տարիքը փոքր է 21-ից և/կամ օրինական վարորդական փորձը (վարորդական ստաժը) մեծ է 1 տարվանից, բայց փոքր 3-ից, ապա ֆիզիկական վնաս ռիսկի դեպքում կիրառվում է չհատուցվող գումարի՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափի կրկնապատիկը:
- 7.5. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված այնպիսի վարորդի (լիազորված վարորդի) կողմից ՏՄ-ն վարելու դեպքում, ում օրինական վարորդական փորձը (վարորդական ստաժը) փոքր է 1 տարվանից, ապա ֆիզիկական վնաս ռիսկի դեպքում կիրառվում է չհատուցվող գումարի՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափի եռապատիկը:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 8.1. Պայմանագրի/Վկայագրի կնքման հիմք է հանդիսանում Ապահովադրի կողմից լրացրած դիմում-հարցաթերթիկը (Ապահովագրողի կողմից տրամադրված) կամ բանավոր հայտը:
- 8.2. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով, երկու օրինակից: Անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից:
- 8.3. Պայմանագրին/Վկայագրին կից կարող են թողարկվել համաձայնագրեր կամ հավելվածներ, որոնք հանդիսանում են դրա անբաժանելի մասը:
- 8.4. Պայմանագրի/Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի դիմումով վերջինիս կտրամադրի Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը:
- 8.5. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- 8.6. Պայմանագիրը/Վկայագիրը գործում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- 8.7. Պայմանագիր կնքելիս, ինչպես նաև Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը Ապահովագրողին պետք է հայտնի ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու

համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին:

- 8.8. Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության վրա ազդող հանգամանքների վերաբերյալ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը/Վկայագիրը համարել առոչինչ և կիրառել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 304 հոդվածով նախատեսված հետևանքները:
- 8.9. Պայմանագիր/Վկայագրի կնքելիս Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է ապահովագրվող СУ-ն ներկայացնի Ապահովագրողի կամ վերջինիս ներկայացուցչի զննմանը, ինչպես նաև տրամադրի.
- 8.9.1. СУ-ի նկատմամբ իր իրավունքը հավաստող փաստաթղթերը,
- 8.9.2. Ապահովադիրի անձնագիրը կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող այլ փաստաթուղթ (այսուհետ՝ նաև անձնագիր), սոցիալական քարտը (առկայության դեպքում), վարորդական վկայականը (եթե ֆիզիկական անձ է),
- 8.9.3. Ապահովադիրի անվանումը, գործունեության և իրավաբանական հասցեները, ՀՎՀՀ, բանկային հաշվի համարը, պետական գրանցման համարը (եթե իրավաբանական անձ է),
- 8.9.4. СУ-ի գրանցման փաստաթուղթը և համապատասխան փաստաթուղթ՝ հանրային ծառայության գրանցման համարանիշի վերաբերյալ (առկայության դեպքում)
- 8.9.5. Լիազորված վարորդների անձնագրերը, վարորդական իրավունքի վկայականները,
- 8.9.6. СУ-ի սեփականատիրոջ անձնագիրը,
- 8.9.7. Ապահովագրողի պահանջով նաև այլ փաստաթղթեր և տվյալներ:
- 8.10. Ապահովագրված СУ-ի նկատմամբ իրավունքներն Ապահովադրից այլ անձի անցնելու դեպքում ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ձեռք բերված իրավունքներն այլ անձին անցնում են միայն Ապահովագրողի համաձայնությամբ:
- 8.11. Այն դեպքում, երբ ապահովագրության օբյեկտի նկատմամբ իրավունքը Ապահովադիրի կողմից փոխանցվել է այլ անձի, ինչի մասին Ընկերությունը չի տեղեկացվել, ինչպես նաև առկա չի եղել 8.10 կետով նախատեսված Ընկերության համաձայնությունը, ապա Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրական հատուցման պահանջը ենթակա է մերժման:
- 8.12. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին/Վկայագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի համար:

8.13. Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին/Վկայագրին:

8.14. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն երկկողմանի ստորագրելու և/կամ կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

9.1. Պայմանագիրը/Վկայագիրը կորցնում է ուժը, եթե.

- ա) ավարտվել է գործողության ժամկետը,
- բ) բացակայում է ապահովագրության օբյեկտը/ռիսկը,
- գ) Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում վճարելու իր պարտականությունները ապահովագրական գումարի սահմանված չափով,
- դ) դադարել է գործել Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,
- ե) դադարել է գործել Պայմաններով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում,
- զ) տեղի է ունեցել ապահովագրված ՏՄ-ի կորուստ ոչ ապահովագրական պատահարի պատճառով,
- է) մահացել է Ապահովադիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադրից բացի Շահառու է հանդիսանում որևէ երրորդ անձ:

9.2. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է վաղաժամկետ լուծվել

9.2.1. Ապահովադրի նախաձեռնությամբ՝ այդ մասին ՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 15 ՕԲ ԱՌԱՋ ծանուցելով Ապահովագրողին: Այս դեպքում Ապահովագրողը Ապահովադրին վերադարձնում է չլրացած օրերի համար ապահովագրավճարը՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$\text{Ավ} = (\text{Ապ} - \text{Հկ}) * \text{Պչ} / \text{Պ} - 5000 \text{ ՀՀ դրամ}$$

Ավ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար

Ապ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար

Հկ - Ապահովադրին կատարած/հաշվարկված հատուցումների գումար

Պչ - Պայմանագրի չլրացած օրերի քանակ

Պ - Պայմանագրով սահմանված գործողության օրերի քանակ

5000 դրամ - գործավարման ծախսեր

- 9.2.2. Ապահովագրողի նախաձեռնությամբ, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տրվել է երկու և ավելի ապահովագրական հատուցում, այն ապահովագրական պատահարների մասով, որոնք տեղի են ունեցել ապահովագրված СУ-ի շահագործողի մեղավորությամբ:
- 9.2.3. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է վաղաժամկետ լուծվել ինչպես Ապահովագրողի, այնպես էլ Ապահովադրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի/Վկայագրի պայմանների էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում: Ապահովադրի կողմից Պայմանագրի խախտման պատճառով Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի/Վկայագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:
- 9.2.4. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 9.2.5. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

- 10.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցման և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը,
- 10.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,
- 10.1.3. Պայմանագրով սահմանված լիազորված վարորդների ցանկում կատարել փոփոխություններ,
- 10.1.4. Պայմանագրով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,
- 10.1.5. Ծանոթանալ սույն Պայմաններին,
- 10.1.6. իր ցանկությամբ ընտրել Ապահովագրողի կողմից առաջարկվող ապահովագրական ռիսկերը,
- 10.1.7. ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում ավելացնել ապահովագրական գումարի մեծությունը, եթե Պայմանագիրը կնքվել է СУ-ի ոչ լրիվ արժեքի չափով,
- 10.1.8. Պայմանագիրը կնքել ի օգուտ այլ անձի (Շահառուի),
- 10.1.9. Պայմանագրի/Վկայագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում ստանալ Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը,

10.1.10. իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների դեպքում դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է:

10.2. Ապահովադիրը պարտավոր է՝

10.2.1. Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով/Վկայագրով ստանձնած իր պարտականությունները,

10.2.2. Սույն պայմանների մասին տեղեկացնել Շահառուին, լիազորված վարորդին կամ SU-ի շահագործման/պահպանման մեջ շահագրգռվածություն ունեցող անձանց (նշված անձանց կողմից սույն Պայմանների պահանջների չկատարումը դիտվում է որպես Ապահովադիրի կողմից Պայմանագրի/Վկայագրի պայմանների չկատարում),

10.2.3. Պայմանագրում/Վկայագրում նշված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,

10.2.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ հայտնել անհրաժեշտ և ստույգ տվյալներ ապահովագրվող SU-ի վերաբերյալ, ինչպես նաև հավանական իրադարձությունների մասին, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար,

10.2.5. Պայմանագրի/Վկայագրի կնքելիս Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրության օբյեկտի վերաբերյալ նույն ռիսկերից մյուս բոլոր ապահովագրության պայմանագրերի առկայության մասին,

10.2.6. Ապահովագրողին անհապաղ հայտնել Պայմանագրի/Վկայագրի կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին,

10.2.7. գողացված SU-ի հայտնաբերման դեպքում անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին,

10.2.8. Ապահովագրողի պահանջով տրամադրել սթափության վիճակի գննության արձանագրությունը, ինչպես նաև պահանջվող բոլոր փաստաթղթերը:

10.2.9. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել SU գրավադրման, վարձակալության տրամադրման, թափքի, շարժիչի և հենասահքի փոփոխման, բանալիների, հեռակառավարման վահանակի, հակաառևանգման համակարգի/սարքավորման և գրանցման փաստաթղթերի կորուստի, SU օգտագործման նշանակությունը փոխելու (օրինակ՝ տաքսի, մրցույթների մասնակցություն և այլն) և այլ այնպիսի հանգամանքների մասին, որոնք ուղղակիորեն կարող են ազդել ռիսկի գնահատման վրա,

- 10.2.10. Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված և այնուհետև վերանորոգված և/կամ վերականգնված SU ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնման: Սույն կետի պահանջները Ապահովադրի կողմից չկատարվելու դեպքում հետագայում ապահովագրական պատահար տեղի ունենալիս Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման տրամադրումը: Սակայն այս դրույթը վերաբերում է միայն SU այն հատվածների և/կամ մասերի, դետալների վնասներին, որոնք նախկինում տեղի ունեցած պատահարների արդյունքում վնասվել են :
- 10.2.11. Պատշաճորեն կատարել Ապահովագրողի կողմից տրված ցուցումները: Ապահովադրի կողմից ցուցումների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման տրամադրումը:
- 10.3. **Ապահովագրողն իրավունք ունի՝**
- 10.3.1. Պայմանագիրը կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթերը,
- 10.3.2. զննել, լուսանկարել և գնահատել ապահովագրվող օբյեկտը,
- 10.3.3. զննել, լուսանկարել և գնահատել ապահովագրված օբյեկտին հասցված վնասը,
- 10.3.4. անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու այլ անձանց,
- 10.3.5. Պայմանագրին/Վկայագրին կից հավելվածներ և կամ համաձայնագրեր կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում/համաձայնագրում հաշվարկված գումարի չափով,
- 10.3.6. Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի պայմանների խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին սույն պայմաններով սահմանված կարգով հայտնելով Ապահովադրին,
- 10.3.7. Պայմանագիրը/Վկայագիրը առոչինչ համարել, եթե Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո պարզվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին ի սկզբանե հայտնել է կեղծ տեղեկություններ՝ կապված իրեն հայտնի հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրանից առաջացած վնասների չափի որոշման համար,
- 10.3.8. Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացվելուց հետո պահանջել փոփոխել Պայմանագրի/Վկայագրի պայմանները կամ վճարել ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար,
- 10.3.9. մերժել Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ արդեն առկա վնասվածքների համար ներկայացված վնասների հայցը,

- 10.3.10. մերժել ապահովագրական հատուցումը հափշտակված SU-ի և/կամ լրացուցիչ սարքավորումների համար, եթե վարորդի՝ ուղեխցիկում չգտնվելու պարագայում, SU-ի դռները կամ պատուհանները բաց է թողնվել (չի կողպել) կանգառի ժամանակ կամ ապահովագրված SU-ի բանալիները և գրանցման փաստաթղթերը թողնվել է ապահովագրված SU-ում կամ երրորդ անձանց համար հասանելի այլ վայրում,
- 10.3.11. Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացումից հետո կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում Ապահովագրական պատահարի վերաբերյալ ստանալ հավելյալ տեղեկություն,
- 10.3.12. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:
- 10.4. Ապահովագրողը պարտավոր է՝**
- 10.4.1. Ապահովադիրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին,
- 10.4.2. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Պայմանագրի/Վկայագրի և սույն պայմանների օրինակ տրամադրել Ապահովադիրին,
- 10.4.3. Հայցի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում հայցի կարգավորման վերաբերյալ ընդունել որոշում,
- 10.4.4. Հայցի բավարարման դեպքում ապահովագրական հատուցման վճարումը կատարել հայցի կարգավորման վերաբերյալ որոշման ընդունման պահից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
- 10.4.5. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում կայացնել պատճառաբանված որոշում և հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքել Ապահովադիր (Շահառուի)՝ ապահովագրողին հայտնի հասցեով,
- 10.4.6. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:
- 10.5. Կողմերը պարտավոր են չհրապարակել և/կամ երրորդ անձանց չտրամադրել իրենց հայտնի դարձած առևտրային, բժշկական, ֆինանսական, ապահովագրական և օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկություններ, որոնք հայտնի են դարձել իրենց հարաբերությունների արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

11. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- 11.1. Պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը, և/կամ Շահառուն, և/կամ Լիազորված վարորդը պարտավոր է՝

11.1.1. պատահարի մասին **ԱՆՀԱՊԱՂ** հայտնել Ապահովագրողին և համապատասխան իրավասու մարմիններին Պայմանագրում և կամ անհատական քարտում նշված հեռախոսահամարներով, մասնավորապես.

- SU-ի ֆիզիկական վնասի և/կամ կորուստի դեպքում՝ Ոստկանությանը, SU-ի հափշտակության դեպքում՝ Ոստկանությանը,
- հրդեհի դեպքում՝ հրշեջ կամ փրկակար ծառայություն մատուցող համապատասխան մարմին, անհրաժեշտության դեպքում Ոստիկանությանը,
- բնական աղետի հետևանքով վնասի կամ կորուստի դեպքում՝ փրկարար կամ համապատասխան ծառայություններ մատուցող մարմին(մարմիններին),
- երրորդ անձանց վնասի դեպքում՝ Ոստիկանությանը,
- վարորդի և/կամ ուղևորների վնասների դեպքում՝ Ոստիկանությանը և բժշկական հաստատություն,

11.1.2. չտեղաշարժել տրանսպորտային միջոցը կամ պատահարի հետ կապ ունեցող առարկաները, մասերը և/կամ չլքել պատահարի վայրը մինչև համապատասխան լիազոր մարմնի (մարմինների) աշխատակիցների և/կամ Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը (եթե Ապահովագրողն Ապահովադրին տեղեկացրել է , որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ 13.4 կետով նախատեսված դեպքերի,

11.2. հնարավորության դեպքում.

- նշել պատահարում ներգրավված SU-ի հաշվառման համարանիշերը, վարորդների տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն), ինչպես նաև իրեն հայտնի ցանկացած այլ տվյալ, որը կարող էր նշանակություն ունենալ պատահարի առաջացման համար,
- պարզել պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթերի տվյալները,
- կազմել պատահարի ընդհանուր նկարագրությունը (Ապահովագրողի պահանջի դեպքում),

11.3. **ԶԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ** ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած SU-ի վնասների **ՎԵՐԱՆՈՐՈՔՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**, առանց Ապահովագրողի համաձայնության,

11.4. չընդունել որևէ պատասխանատվություն կամ չկատարել որևէ առաջարկ, խոստում կամ վճարում, կամ որևէ ծախս՝ առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության, ինչպես նաև Ապահովագրողին տրամադրել այնպիսի օժանդակություն, որը կարող է պահանջել Ապահովագրողը,

11.5. չգործել ի վնաս Ապահովագրողի շահերի,

- 11.6. պատահարի դեպքում ողջամիտ, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման կամ նվազեցման համար, ինչպես նաև ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը այլ կողմերի հետ հարաբերություններում,
- 11.7. լրացնել և Ապահովագրողին ներկայացնել **ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ՁԵՎԸ** (հայցային դիմում) հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան պատահարի տեղի ունենալու օրվանից 2 (երկու) **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱԾ** ընթացքում (Ապահովադիրը կարող է ստանալ պահանջի ձևը Ապահովագրողից): Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր պահանջ չներկայացնելը հիմք է հանդիսանում ապահովագրական հատուցում չվճարելու, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը և/կամ Շահառուն ապացուցում են դրա անհնարինությունը:
- 11.8. Պահպանել վնասված ՏՄ-ն կամ նրա մնացորդները, վնասված մասերը մինչև Ապահովագրողի կամ վերջինիս կողմից մատնանշված անկախ մասնագետի (փորձագետի) կողմից զննումը,
- 11.9. Ապահովագրողին հայտնել մեղավոր կողմից հատուցում ստանալու, ինչպես նաև երրորդ անձանց պատճառված վնասների համար իրեն ներկայացված պահանջների մասին,
- 11.10. Պատահարի դեպքում ՏՄ լիազորված վարորդը դրա տեղի ունենալու պահից 24 ժամվա ընթացքում պարտավոր է չօգտագործել ոգելից խմիչք և Ապահովագրողի պահանջով՝ վերջինիս հաշվին անցնել իրավասու պետական մարմնի կողմից անցկացվող սթափության վիճակի զննություն, նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս պատահարի տեղի ունենալուց հետո արդեն անցել է նման զննություն,
- 11.11. Ապահովագրողի պահանջով տալ լիազորագիր դատարանում կամ պետական այլ մարմիններում Ապահովադիրի շահերի ներկայացման համար,
- 11.12. Սույն Պայմանների 10.2. կետով (10.2-րդ կետի բոլոր ենթակետերով) և 11 գլխով նշված դրույթների **ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ** և/կամ **ՉԿԱՏԱՐՈՒՄԸ** կարող է հիմք հանդիսանալ **ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ** համար:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ

- 12.1. Ապահովագրական հատուցումը Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադիրին կամ Շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ապահովագրական հատուցումը կարող է վճարվել Ապահովադիրին կամ Շահառուին (նաև մասնագիտացված կազմակերպություններին, բուժհաստատություններին և այլն) ՀՀ դրամով, որը սակայն չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը:
- 12.2. **Բաժին Ա-ով ապահովագրական հատուցման չափը որոշվում է հետևյալ կերպ.**

- 12.2.1. Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական արժեքով ապահովագրված SU-ի հափշտակության դեպքում հատուցումը կկազմի հատուցման վճարման օրվա դրությամբ տվյալ SU-ի շուկայական արժեքը՝ նվազեցրած Պայմանագրում/Վկայագրում հափշտակության համար նախատեսված չհատուցվող գումարի չափը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով/Վկայագրով), սակայն եթե հատուցման վճարման օրվա դրությամբ ապահովագրված SU-ի շուկայական արժեքը մեծ է ապահովագրական գումարից, ապա հատուցումը կատարվում է ապահովագրական գումարի չափով՝ նվազեցրած չհատուցվող գումարի չափը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):
- 12.2.2. Պայմանագրում նշված ապահովագրական արժեքով ապահովագրված SU-ի ֆիզիկական վնասի դեպքում Հատուցումը հաշվարկվում է՝ վնասի մեծությունը նվազեցնելով Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափով (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):
- 12.2.3. Եթե ապահովագրված SU-ն հայտարարված է օգտագործման համար լիովին ոչ պիտանի, այսինքն դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին է կամ տնտեսապես չհիմնավորված (վերանորոգման ծախսերը $\geq$ SU-ի շուկայական արժեք - ջարդոնների արժեք), ապա ապահովագրական արժեքով ապահովագրված SU-ի Հատուցումը կկազմի վնասի օրվա դրությամբ այդ SU-ի շուկայական արժեքի, որը չպետք է գերազանցի ապահովագրական գումարը, և ջարդոնների արժեքի տարբերությունը՝ նվազեցրած չհատուցվող գումարի չափով (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով): Այս դեպքում SU-ի սեփականատերը պահպանում է SU-ի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը:
- 12.2.4. Եթե SU-ն ապահովագրված է ոչ լրիվ արժեքով, ապա Ֆիզիկական վնասի դեպքում Ապահովագրողն իրականացնում է վնասի հատուցումը SU-ի Ապահովագրական գումարի և SU-ի պատահարի օրվա դրությամբ SU-ի շուկայական արժեքի հարաբերության համամասնությամբ՝ նվազեցնելով չհատուցվող գումարի չափով, եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով՝

$$Z = \frac{VU \cdot \frac{UQ}{UQ}}{UQ} - QQ$$

որտեղ,

Z – Հատուցում

VU – վնասի մեծություն

UQ – ապահովագրական գումար

UU – SU-ի շուկայական արժեքը ապահովագրական պատահարի օրվա դրությամբ

ԶԳ – ոչ պայմանական չհատուցվող գումար

12.2.5. Ընկերությունը չի հատուցում օգտագործման համար ոչ պիտանի հայտարարված SU-ի ուտիլիզացիայի կամ վերականգնման համար կատարված ծախսերը:

12.2.6. Ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված SU-ին հասցված վնասի չափը գնահատվում է Ապահովագրողի կողմից կամ վերջինիս մատնանշված անկախ մասնագետի (փորձագետի) կողմից:

12.2.7. Ապահովագրողն իր ընտրությամբ կարող է վերանորոգել, փոխարինել SU-ը կամ դրամային տեսքով հատուցել վերջինիս վնասը կամ կորուստը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

12.2.8. Այն պարագայում, երբ Ապահովագրողն ընտրում է վերանորոգման տարբերակը, ապա Ապահովադիրը կամ հատուցում ստացող անձը պարտավորվում է վճարել Ապահովագրողին Պայմանագրով/Վկայագրով սահմանված չհատուցվող գումարը հատուցման որոշման մասին տեղեկանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում, եթե կողմերի միջև չկա այլ գրավոր համաձայնություն: ::

12.2.9. Ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված SU-ին հասցված վնասի գնահատումը իրականացվում է հետևյալ կերպ.

12.2.9.1. որպես առաջնային մոտեցում օգտագործվում է համանման արտադրության երկրորդային շուկայում վաճառվող, օգտագործված պահեստամասերի արժեքը,

12.2.9.2. որպես երկրորդային՝ Ապահովագրողի հայեցողությամբ կիրառվում է հետևյալ մոտեցումներից մեկը.

- օգտագործվում է նոր, բայց ոչ գործարանային պահեստամասերի արժեքը,
- օգտագործվում է նոր, գործարանային պահեստամասերի արժեքը՝ կիրառելով մաշվածություն ստորև բերված աղյուսակի համաձայն.

տոկոս(%)

Վազքը (Հազ.կմ)	Տրանսպորտային միջոցի տարիքը (տարի)					
	0-2	3-4	5	6-8	9-10	11 և ավելի
0-40	Զի կիրառվում	13%	15	178	21	24
40-60	14	16	18%	20	23	27
60-120	16	20	22	24	28	30
120-140	18	22	24	27	29	31
140-160	20	23	26	28	29	32

160-180	22	26	27	30	31	33
180-200	24	27	29	31	32	33
200-250	25	28	30	32	33	35
250-350	32	33	36	38	38	40
350 - ից ավելի	40	42	44	46	46	47

12.2.10. Եթե SU ապահովագրված է իր ամբողջ արժեքով և Ապահովագրական պատահարի առաջացման մեջ (բացառությամբ՝ հափշտակության դեպքերի) Ապահովադրի/Լիազորված վարորդի մեղավորությունը ամբողջապես բացակայում է (երրորդ անձի կամ անձանց ամբողջական մեղավորության դեպքում), Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելիս չի կիրառում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը՝ պայմանով, որ Ապահովադիրը (Շահառուն) տեղի ունեցած պատահարում բացահայտված մեղավոր երրորդ անձի կողմից պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը պատշաճ կերպով կփոխանցի Ապահովագրողին, և Ապահովադիրը (Շահառուն) որևէ կերպ չի խոչընդոտի Ապահովագրողի կողմից այդ իրավունքի իրականացմանը: Սույն կետը գործում է այն դեպքում, երբ նշված է Պայմանագրում/Վկայագրում:

12.2.11. Ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված SU-ին հասցված վնասի գնահատումն իրականացվում է սույն Կանոնների 12.1.9.2-րդ կետով սահմանված եղանակով, եթե Ապահովագրողի գնահատմամբ հնարավոր չէ կիրառել Կանոնների 12.1.9.1-րդ կետով սահմանված եղանակը:

12.2.12. Ապահովագրական հատուցման մեջ է մտնում նաև ապահովագրական պատահարի ժամանակ SU-ին պատճառվելիք վնասը նվազեցնելու համար կատարված անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը, ինչպես նաև ապահովագրական պատահարի հետևանքով SU-ն դեպքի վայրից քարշակով տեղափոխման ծախսերը (եթե SU հնարավոր չէ տեղաշարժել վարելու միջոցով)՝ հետևյալ սահմանաչափերով՝ Երևան քաղաքում տեղափոխման համար հատուցվող գումարը չի կարող գերազանցել 10,000 ՀՀ դրամը, իսկ Երևան քաղաքից դուրս տեղափոխման համար՝ 40,000 ՀՀ դրամը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրում/Վկայագրում:

12.2.13. Այն դեպքում, երբ Ապահովադիրը կնքել է նույն ռիսկից SU-ի ապահովագրության պայմանագրեր մի քանի Ապահովագրողների մոտ (կրկնակի ապահովագրություն) ապահովագրական գումարը գերազանցող գումարով, ապա բոլոր ապահովագրողների կողմից վճարվող

ապահովագրական հատուցման գումարը չպետք է գերազանցի ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ՏՄ շուկայական արժեքը: Այդ դեպքում Ապահովագրողի ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի և նույն ՏՄ-ի՝ բոլոր այլ ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ:

- 12.2.14. Հափշտակված ՏՄ-ի հայտնաբերման դեպքում Ապահովադիրը (սեփականատերը) և կամ Շահառուն/Լիազորված վարորդը պարտավոր են այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից 24 ժամվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին և հայտնաբերված տրանսպորտային միջոցը ներկայացնել Ապահովագրողի գնմանը, հակառակ դեպքում Ապահովագրողը կարող է հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց կամ հետ պահանջել արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումն ամբողջությամբ:
- 12.2.15. Եթե տրանսպորտային միջոցը հայտնաբերվել է մինչ ապահովագրական հատուցում տրամադրելը, ապա հափշտակության փաստով ապահովագրական հատուցման պահանջը ենթակա է մերժման: Այս դեպքում, հատուցման են ենթակա միայն տրանսպորտային միջոցին պատճառված այն գույքային վնասները, որոնք նախատեսված են սույն Պայմաններով
- 12.2.16. Եթե տրանսպորտային միջոցը հայտնաբերվել է հափշտակության փաստով ապահովագրական հատուցում տրամադրելուց հետո, ապա հափշտակված տրանսպորտային միջոցի հայտնաբերման մասին տեղեկանալուց հետո Ապահովագրողը հատուցած գումարի հետ վերադարձման պահանջով Ապահովադիրին ներկայացնում է գրավոր դիմում՝ նշելով նաև պահանջի կատարման ժամանակահատվածը: Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը սույն կանոնների 12.1.14-րդ կետում սահմանված ժամկետներում ներկայացվել է Ապահովագրողի գնմանը, ապա հետ վերադարձման ենթակա գումարի չափը նվազեցվում է տրանսպորտային միջոցին պատճառված վնասի չափով:
- 12.2.17. Ապահովադիր (սեփականատիրոջ) և կամ Շահառուի, Լիազորված տիրապետողի կողմից սույն Պայմանների 12.1.14-րդ կետով նախատեսված ժամկետներում ՏՄ-ն Ապահովագրողի գնմանը չներկայացնելու դեպքում Ապահովադիրը և /կամ/ Շահառուն զրկվում են սույն Պայմանների 12.1.15-րդ կետով նախատեսված գույքային վնասների հատուցում ստանալու կամ սույն Կանոնների 12.1.16-րդ կետով նախատեսված հատուցված գումարի հետվերադարձման դեպքում տրանսպորտային միջոցին պատճառված վնասների չափով հատուցված գումարի նվազեցման իրավունքից:

12.2.18. Այն դեպքում, երբ SU-ը հայտնաբերվել է մինչև ապահովագրական հատուցման վճարումը և հափշտակության հետևանքով SU-ին պատճառվել է գույքային վնաս, ապա SU-ի պատճառված վնասը գնահատվում է որպես երրորդ անձանց անօրինական գործողություններ:

12.3. Բաժին Բ-ով ապահովագրական հատուցումը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով.

12.3.1. ապահովագրված SU-ի վարորդի և (կամ) ուղևորների մահվան դեպքում նստատեղի/անձի համար սահմանված ապահովագրական գումարի 100%՝ հանելով Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):

12.3.2. Մշտական լրիվ անաշխատունակություն՝ ապահովագրված SU-ի վարորդի և (կամ) ուղևորների մարմնի մեկ մասի (ձեռք, ոտք) կորստի արդյունքում՝ յուրաքանչյուր նստատեղի/անձի համար սահմանված ապահովագրական գումարի 25%՝ հանելով Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):

12.3.3. Մշտական լրիվ անաշխատունակություն՝ ապահովագրված SU-ի վարորդի և (կամ) ուղևորների մարմնի երկու և ավելի մասերի (ձեռքեր, ոտքեր) կորստի արդյունքում՝ յուրաքանչյուր նստատեղի/անձի համար սահմանված ապահովագրական գումարի 50%՝ հանելով Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):

12.3.4. Մշտական լրիվ անաշխատունակություն՝ ապահովագրված SU-ի վարորդի և (կամ) ուղևորների մեկ աչքի տեսողության մշտական և անվերականգնելի կորստի արդյունքում՝ յուրաքանչյուր նստատեղի/անձի համար սահմանված ապահովագրական գումարի 25%՝ հանելով Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):

12.3.5. Մշտական լրիվ անաշխատունակություն՝ ապահովագրված SU-ի վարորդի և (կամ) ուղևորների տեսողության ամբողջովին կորստի արդյունքում՝ յուրաքանչյուր նստատեղի/անձի համար սահմանված ապահովագրական գումարի 50%՝ հանելով Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է Պայմանագրով):

12.3.6. Մշտական լրիվ անաշխատունակություն՝ (բացառությամբ մեկ կամ երկու աչքի տեսողության կամ վերջույթի (վերջույթների) ամբողջական և անվերականգնելի կորստի) նստատեղի/անձի համար սահմանված ապահովագրական գումարի մասնաբաժին՝ կախված հաշմանդամության խմբից.

խումբ I - 80% ապահովագրական գումարի նկատմամբ

խումբ II - 60% ապահովագրական գումարի նկատմամբ

խումբ III - 25% ապահովագրական գումարի նկատմամբ

հաշմանդամ երեխայի դեպքում - 50% ապահովագրական գումարի նկատմամբ:

12.3.7. Մինչև 100,000 ՀՀ դրամ բժշկական ծախսերի համար՝ ներառյալ շտապ բուժօգնության ծախսերը:

12.4. Ցանկացած անհատին վճարման ենթակա առավելագույն գումարը նշված է Պայմանագրում:

12.5. ՏՄ-ի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարների հետևանքով մահվան դեպքում վճարումը կատարվում է մահացածի իրավահաջորդներին:

12.6. Բաժին Գ-ով ապահովագրական հատուցման չափը որոշվում է հետևյալ կերպ.

12.6.1. Ապահովագրողի կամ վերջինիս կողմից մատնանշված անկախ մասնագետի (փորձագետի) կողմից, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ դատական կարգով:

12.6.2. Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության դեպքում վերջինս կհատուցի Ապահովադիրին կամ նրա անունից երրորդ անձանց այն բոլոր գումարները, որոնք Ապահովադիրը կամ Պայմանագրում նշված յուրաքանչյուր Լիազորված վարորդ պարտավոր կլինի վճարելու որևէ երրորդ անձի (բացառությամբ Պայմանագրում նշված դեպքերի) վնասների կամ վնասվածքների հետ կապված ծախսերի համար, որոնք պատճառվել են այդ անձանց կամ նրանց գույքին՝ սույն Պայմանագրով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցով կամ դրա մասնակցությամբ:

12.6.3. Առողջությանը պատճառված վնասների հետ կապված ծախսեր են համարվում՝ տուժած երրորդ անձի բժշկական հաստատություններում մնալու, բուժվելու, ախտորոշման, առողջության վերականգնման հետ կապված, ինչպես նաև բժշկի ցուցումով դեղամիջոցներ, բժշկական պարագաներ ձեռք բերելու, կողմնակի խնամքի, լրացուցիչ սննդի, տնային բուժման, պրոթեզավորման, տեխնիկական այլ միջոցների (հենակ, շարժական սայլակ, լսողական ապարատ և այլն) ձեռքբերման հետ կապված անհրաժեշտ, ողջամիտ և փաստացի ապացուցված ծախսերը: Ապահովագրողը կհատուցի վերը նշված ծախսերը, եթե տուժած անձը չունի նման բուժում, դեղորայք, բժշկական պարագաներ և/կամ միջոցներ անվճար ստանալու իրավունք: Սույն կանոնների համաձայն անհրաժեշտ և ողջամիտ են համարվում այն ծախսերը, որոնք իրականացվել են բացառապես բժշկի ցուցումով և ուղղակիորեն պայմանավորված են եղել անձի առողջությանը պատճառված վնասի բնույթից, ծանրության աստիճանից: Ցանկացած դեպքում, հատուցում տրամադրելիս կատարված ծախսերի անհրաժեշտ և ողջամիտ լինելու վերաբերյալ հիմք ընդունվում է Ապահովագրողի բժիշկ-մասնագետի կողմից տրված եզրակացությունը:

12.6.4. Աշխատունակությունը ժամանակավոր կամ մշտապես կորցնելու հետևանքով կորցրած աշխատավարձի կամ այլ եկամուտների հատուցման վճարումը

Ապահովագրողը կկատարի Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, Պայմանագրով և Պայմաններով սահմանված կարգով: Այն դեպքում, եթե անձն ունի այլ մարմիններից փոխհատուցում ստանալու իրավունք, օրինակ՝ գործատուից, ապա առաջնահերթությունը տրվում է դրան, իսկ Ընկերությունն այդ մասով ազատվում է հատուցման պարտավորությունից:

12.6.5. Մահվան հետ կապված ծախսեր են համարվում կերակրողին կորցնելու և հուղարկավորության հետ կապված ծախսերը: Հուղարկավորության հետ կապված հատուցման առավելագույն չափը կազմում է 800 հազ. ՀՀ դրամ: Մահվան հետ կապված ծախսերի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը և վնասի չափի հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

12.6.6. Գույքի (նաև ավտոտրանսպորտային միջոցի) կորստի կամ դրան պատճառված վնասների հետ կապված ծախսեր են համարվում ոչնչացված կամ վնասված գույքի փոխարինման, վերանորոգման և/կամ վերականգնման ծախսերը այն չափով, որը բավարար է մինչև կորուստը կամ վնասը գույքի վիճակը նույնությամբ (ոչ ավելի լավ և ոչ էլ ավելի թանկ) վերականգնելու/վերանորոգելու համար: Գույքը ճանաչվում է ոչնչացված, եթե դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին է կամ տնտեսապես աննպատակահարմար: Գույքի ոչնչացման դեպքում հատուցվում է ապահովագրական պատահարի դրությամբ գույքի իրական (շուկայական) արժեքի և մնացորդային արժեքի տարբերության չափով:

12.6.7. Ապահովագրողի կողմից՝ գույքային (նաև ավտոտրանսպորտային միջոցի) կորստի կամ վնասի հատուցման պահանջի դեպքում վճարման ենթակա գումարը պետք է հիմնված լինի տվյալ կորստի կամ վնասի պահի դրությամբ ՀՀ-ում նմանատիպ գույքի, բաղադրամասի, պահեստամասի կամ սարքավորման շուկայական արժեքի վրա:

12.6.8. Գույքի (նաև ավտոտրանսպորտային միջոցի) վնասվելու դեպքում վնասի չափը որոշվում է՝ ելնելով այն վերականգնելու/վերանորոգելու համար անհրաժեշտ ծախսերի չափից: Վնասված բաղադրամասերը, պահեստամասերը և/կամ սարքավորումները փոխարինվում են (հաշվի են առնվում դրանց փոխարինման հետ կապված ծախսերը) միայն այն դեպքում, երբ դրանց վերականգնելը/վերանորոգելը տնտեսապես աննպատակահարմար է, կամ եթե դրանց վերականգնելու/վերանորոգելու արդյունքում դրանք անհնար է բերել հետագա օգտագործման համար պիտանի վիճակի:

12.6.9. Գույքային վնասների դեպքում ապահովագրական հատուցման չափը որոշելիս Ապահովագրողը իրավասու է հաշվի առնել վնասված գույքի (նաև ավտոտրանսպորտային միջոցի) և/կամ դրա բաղադրամասերի,

պահեստամասերի և/կամ սարքավորումների մաշվածությունը՝ համաձայն 12.1.9 կետի:

- 12.6.10. Ապահովագրողն իրավասու է, սակայն պարտավոր չէ վճարել փաստաբանական ծառայությունների վարձավճարները, որոնք կատարվել են տեղի ունեցած իրադարձություններն իրավապահ մարմիններին ներկայացնելու կամ դատարանում ապահովագրական պատահարի հետ կապված գործի ներկայացման համար: Այդպիսի ծախսերը վճարվում են միայն Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությամբ, սակայն ոչ ավել, քան ապահովագրության վկայագրում սույն բաժնի համար սահմանված ապահովագրական գումարի 10%-ի չափով:
- 12.6.11. Գույքային վնասների չափի գնահատումները կարող են իրականացնել համապատասխան լիազորված մարմինները և/կամ տվյալ տեսակի գույքը վերանորոգելու/վերականգնելու իրավունք ունեցող (օրենսդրությամբ սահմանված) և նման գործունեություն իրականացնող անձինք կամ կազմակերպությունները: Պատճառված վնասի համար անձի մեղավորության աստիճանը հաստատվում է լիազորված պետական մարմինների կողմից կամ դատարանի համապատասխան որոշմամբ: Եթե Ապահովագրողն ու լիազորված վարորդը և տուժած երրորդ անձը գալիս են նախնական համաձայնության վնաս պատճառողի մեղավորության վերաբերյալ, ապա Ապահովագրողը կարող է հատուցման վճարում կատարել առանց դրա վերաբերյալ պետական լիազորված մարմինների կողմից տրված որոշման/եզրակացության կամ դատարանի որոշման:
- 12.6.12. Առողջությանը պատճառված վնասի դեպքում վնասի փաստը և դրա չափը կարող է հավաստվել միայն համապատասխան բուժական հաստատության կողմից տրված ակտով կամ դատաբժշկական փորձաքննության ակտով/եզրակացությամբ, կամ դատական ակտով:
- 12.6.13. Միաժամանակ երրորդ անձի կյանքին/առողջությանը և գույքին հասցված վնասի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է (ապահովագրական գումարի սահմաններում) նախ կյանքին/առողջությանը հասցված վնասի(ների) համար, այնուհետ՝ գույքի համար: Մեկից ավելի տուժողների դեպքում յուրաքանչյուր տուժողին Ապահովագրական հատուցումն իրականացվում է ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված ընդհանուր վնասի մեջ յուրաքանչյուր տուժողի կրած վնասի համամասնությամբ:
- 12.6.14. Ապահովագրական հատուցումը վճարվում է տուժած երրորդ անձին (նրա իրավահաջորդներին) Պայմանագրում Բաժին Գ-ի համար նշված ապահովագրական գումարի սահմաններում:

13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՅԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 13.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալուց **ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ** (լիազորված վարորդը, Շահառուն) պետք է **ԱՆՀԱՊԱՂ** տեղեկացնի Ապահովագրողին:
- 13.2. Պատահարի ի հայտ գալու օրվանից **2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** Ապահովադիրը, Լիազորված վարորդը կամ Շահառուն պետք է ներկայացնի հայցային դիմումը:
- 13.3. Հայցային դիմումին կից ներկայացվող և ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ հիմնական փաստաթղթերն են՝

Բաժին Ա.

13.3.1. Ֆիզիկական վնասի և/կամ հափշտակության դեպքում.

- Ապահովադրի անձնագիրը,
- Ապահովադրի սոցիալական քարտը (առկայության դեպքում),
- Լիազորված վարորդի անձնագիրը,
- Լիազորված վարորդի վարորդական վկայականը,
- Լիազորված վարորդի սոցիալական քարտը (առկայության դեպքում),
- ՏՄ-ի սեփականատիրոջ անձնագիրը,
- Տեխնիկական անձնագիրը,
- ՃՏՊ-ի դեպքում՝ Լիազորված վարորդի սթափության վիճակի զննման ակտ,
- Պետական իրավասու մարմնի կողմից տրված դեպքի մասին արձանագրությունը (եզրակացությունը) կամ համապատասխան այլ փաստաթղթեր,
- Վնասի չափը հավաստող փորձագետի եզրակացությունը (առկայության դեպքում),
- քրեական գործը հարուցելու մասին որոշում, իսկ Պայմաններով նախատեսված դեպքերում նաև քրեական գործի ավարտի կամ կասեցման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (ՏՄ-ի կամ ավտոպահեստամասերի հափշտակության կամ այլ դեպքում, եթե հարուցվել է քրեական գործ),
- ՏՄ-ի նվազագույնը երկու գործարանային բանալիները, հեռակառավարման և հակաառևանգման վահանակները (սույն պահանջը վերաբերվում է միայն հափշտակության դեպքերին):
- Ապահովագրողի պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ:

Բաժին Բ.

13.3.2. Ապահովագրված ՏՄ-ի Լիազորված վարորդի/ուղևորի մահվան դեպքում.

- դատաբժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն կամ
- բժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն

- մահվան վկայական
- Ժառանգ լինելու փաստը հավաստող փաստաթուղթ և Ժառանգության ընդունման համար նոտարական մարմնին ներկայացված դիմումի պատճենը:

13.3.3. Ապահովագրված SU-ի Լիազորված վարորդի/ուղևորի առողջությանը պատճառված վնասի դեպքում.

- դատաբժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն և/կամ
- բժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն և/կամ
- բժշկական տեղեկանք, և/կամ
- կոնսուլտացիոն եզրակացություն, և/կամ
- քաղվածք ամբուլատոր քարտից, և/կամ
- Էպիկրիզ
- պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ (անհրաժեշտության դեպքում)
- պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն) և
- դրամարկդի մուտքի օրդերի կտրոն՝ կանխիկ վճարման դեպքում (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն) և/կամ
- բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն):

Բաժին Գ.

13.3.4. Երրորդ անձի մահվան դեպքում.

- դատաբժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն և/կամ
- բժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն և/կամ
- դատարանի ուժի մեջ մտած դատական ակտ
- մահվան վկայական
- կերակրողին կորցնելու հետ կապված պահանջը հիմնավորող փաստաթղթեր,
- Ժառանգ լինելու փաստը հավաստող փաստաթուղթ և Ժառանգության ընդունման համար նոտարական դիմումի պատճենը:

13.3.5. Երրորդ անձի առողջությանը պատճառված վնասի դեպքում.

- դատաբժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն և/կամ
- բժշկական փորձաքննության ակտ/եզրակացություն և/կամ
- բժշկական տեղեկանք և/կամ
- կոնսուլտացիոն եզրակացություն և/կամ

- քաղվածք ամբուլատոր քարտից և/կամ
- էպիկրիզ
- պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ (անհրաժեշտության դեպքում)
- պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն) և
- դրամարկղի մուտքի օրդերի կտրոն՝ կանխիկ վճարման դեպքում (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն) և/կամ
- բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում (եթե ծախսը իրականացվել է Ապահովադրի կամ Ապահովադրի փոխարեն այլ անձի կողմից ինքնուրույն)
- եթե երրորդ անձի առողջությանը պատճառված վնասի հետևանքով նա ժամանակավոր կամ մշտապես կորցրել է իր աշխատունակությունը, ապա անհրաժեշտ է նաև ներկայացնել դրա հետևանքով վերջինիս կրած կորուստները հաստատող փաստաթուղթ(եր):

13.3.6. Երրորդ անձի գույքին պատճառված վնասի դեպքում.

- ֆինանսական փաստաթուղթ (հաշիվ-ապրանքագիր, հաշիվ տեղեկանք) և/կամ տեղեկանք տրված ավտոտրանսպորտային միջոցը (գույքը) վերանորոգելու/վերականգնելու օրենսդրությամբ սահմանված իրավունք ունեցող և նման գործունեություն իրականացնող անձի կամ կազմակերպության կողմից կամ
- եզրակացություն/ակտ կամ հաշվետվություն՝ տրված անկախ փորձագետի կողմից
- պայմանագիր և/կամ հաշիվ-ապրանքագիր (եթե Ապահովագրողի համաձայնությամբ ծախսն իրականացվել է ինքնուրույն) կամ
- դրամարկղի մուտքի օրդերի կտրոն՝ կանխիկ վճարման դեպքում (եթե Ապահովագրողի համաձայնությամբ ծախսն իրականացվել է ինքնուրույն) կամ
- բանկի վճարման հանձնարարագիր՝ փոխանցումով վճարելու դեպքում (եթե Ապահովագրողի համաձայնությամբ ծախսն իրականացվել է ինքնուրույն):

13.3.7. ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

13.4. Եթե Ապահովագրողն անհապաղ տեղեկացվել է պատահարի տեղի ունենալու մասին և մեկնել է դեպքի վայր, ապա Ապահովագրողը, կախված դեպքից, կարող է որոշել՝ կանչել պետական իրավասու մարմիններին դեպքի վայր, թե՛ ոչ: Եթե Ապահովագրողը որոշում է, որ պետական իրավասու մարմինների ներկայությունը

պարտադիր չէ, ապա Ապահովագրողը կազմում է դեպքի մասին համապատասխան ակտ:

- 13.5. Ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրողին հատուցում ստանալու դիմում ներկայացնելուց հետո Ապահովադրի կողմից երկու ամսվա ընթացքում սույն Կանոնների 13.3-րդ կետի բոլոր ենթակետերում նշված փաստաթղթերն Ապահովագրողին չներկայացնելու դեպքում վերջինս իրավասու է մերժել ներկայացված հատուցման դիմումը: Նշված ժամկետը կարող է երկարացվել, եթե առկա են ուշացման հարգելի պատճառներ:
- 13.6. Ապահովադրի կողմից ներկայացրած յուրաքանչյուր հայցային դիմումին կից ներկայացվող փաստաթղթի վրա Ապահովագրողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին
- 13.7. Ապահովագրողի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու օրվանից հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է կայացնում հայցի բավարարման կամ մերժման վերաբերյալ: Որոշման մասին Ապահովադիրը ծանուցվում է բանավոր կամ գրավոր կարգով:
- 13.8. Հայցի բավարարման դեպքում Հատուցման վճարումը կատարվում է հայցի կարգավորման վերաբերյալ որոշման կայացումից և Ապահովադրի կողմից այդ որոշման վերաբերյալ գրավոր համաձայնություն տալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.9. Հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին) Պայմանագրում նշված հասցեով կամ Ապահովադրին է տրամադրվում առձեռն:
- 13.10. SU-ի և կամ լրացուցիչ սարքավորման հափշտակության դեպքում ապահովագրական հատուցման որոշումը կայացվում է հափշտակության մասին տեղեկանալուց հետո 3 ամսվա ընթացքում, սակայն ոչ շուտ, քան ոստիկանության կողմից SU-ի հափշտակության վերաբերյալ քրեական գործի հարուցումը:
- 13.11. Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված վարորդը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի՝ ներառյալ պատճենների, իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:

14. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔ)

- 14.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ Շահառուի)

պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի չափով:

14.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

14.3. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

14.4. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Ապահովագրված անձը, Շահառուն) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավել վճարված հատուցման գումարը:

15. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

15.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

15.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս Կողմին նախապես տեղյակ պահելով:

15.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

16. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

- 16.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն, լիազորված վարորդը) պարտավոր է Ապահովագրողին անհապաղ հայտնել Պայմանագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում իրեն հայտնի էական հանգամանքների փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա:
- 16.2. Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության պայմանագրում նախատեսված փոփոխությունները, ինչպես նաև.
- 16.2.1. SU վարձակալության, լիզինգի, գրավի հանձնումը,
- 16.2.2. Ապահովագրված SU-ի գրանցման փաստաթղթերի, բանալիների ազդանշանային համակարգի հեռակառավարման վահանակի, գրանցման համարանիշների կորուստը կամ հափշտակությունը,
- 16.2.3. Օգտագործելու և պահելու պայմանների էական փոփոխությունը,
- 16.2.4. Շահագործման նպատակի փոփոխությունը:
- 16.2.5. Ապահովագրական ռիսկի փոփոխմանը հանգեցնող հանգամանքների մասին տեղեկացվելուց հետո Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում՝ ռիսկի աստիճանի փոփոխմանը համաչափ:
- 16.2.6. Եթե Ապահովադիրը ռիսկի աստիճանի փոփոխման մասին տեղյակ չի պահում Ապահովագրողին կամ ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճար չի վճարում, ապա Ապահովագրողը ապահովագրության պայմաններին համապատասխան մերժում է ապահովագրական հատուցումը և լուծում Պայմանագիրը, իսկ վճարված Ապահովագրավճարը հետ չի վերադարձվում:
- 16.2.7. Ապահովագրական ռիսկի փոփոխմանը հանգեցնող հանգամանքների մասին տեղեկացվելուց հետո Ապահովագրողը լուծում է ապահովագրության պայմանագիրը կամ լրացուցիչ Ապահովագրավճարի մուծման պայմաններում թողարկում է համաձայնագիր, որտեղ նշվում են համապատասխան փոփոխությունները:

17. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 17.1. Պայմանագրում/Վկայագրում փոփոխություններ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
- 17.2. Պայմանագրից/Վկայագրից և սույն Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում/Վկայագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

17.3. Սույն պայմանների և Պայմանագրի/Վկայագրի միջև հակասությունների դեպքում առաջնայնությունը տրվում է Պայմանագրի/Վկայագրի դրույթներին: